

ԺԻՐԱՅԻՐ ՍԵՖԻԼՅԱՆԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾ ԻՐԱՐԱՆՑՈՒՄ Ե ԱՌԱՋԱՅՐԵԼ ՆԱԵՎ ՍՓՅՈՒՐՔՈՒՄ

Ինչպես հայտնի է, մեր ԱԱԾ-ն առանձնապես աչքի չի ընկնում իր պրոֆեսիոնալ գործունեությամբ: Վերջին մի քանի տարիներին այս կառույցը հիշեցնում է իշխանության դուստր ձեռնարկություն, որը կազմուպատրաստ սպասում է, թե ինչ պատվեր կիջեցնեն վերեւից: ԱԱԾ-ի վերջին շուրջ ժիրայր ՍԵՖԻՅԱՆԻ ԵՎ Վարդան Մալխասյանի ձերբակալությունն էր, որը վրդովեցրել է նաեւ բազմաթիվ սփյուռքահայերի: Այս օրերին Յայաստանում է գտնվում Ժիրայրի եղբայրը՝ ԹՈՐՈՍ ՍԵՖԻԼՅԱՆԸ, որի մտահոգություններն էլ ներկայացնում ենք՝ կապված նրա եղբոր ձերբակալության հետ:

-Ձեր եղբոր ձերբակալության հետ կապված արձագանքել են բազմաթիվ քաղաքական ուժեր եւ հասարակական կազմակերպություններ. կարո՞ղ եք այս իրողության շուրջ Ձեր գնահատականները ներկայացնել՝ փորձելով վերանայ անձնական գործունից:

-Ինձ համար ամեն ինչ շատ պարզ ու հստակ է: Այս եղած իրականությունը քաղաքական խաղ է, եւ մենք այսօր համոզված ենք, որ եղածը քաղաքականության հետ կապված խաղարկություն է, որն արվում է երեսփոխանների ընտրություններից 3-4 ամիս առաջ: Շատերն ուզում են հասարակությանը ներկայանալ բոլորովին այլ բարքերով, կամ էլ ոմանք միմյանց հետ խնդիրներ ունեն եւ ուզում են, որ Ժիրայրը վճարի այդ բաժինը: Կրկնում են, որ սա քաղաքական խնդիր է եւ որիչ ոչինչ: Իրենք փորձեցին ինչ-որ զենքերի հարց կապել Ժիրայրի հետ, բայց նման բան չկա: Ձերբակալության քաղաքական լինելու մասին ասում եմ ոչ միայն ես՝ որպես Ժիրայրի եղբայր, այլեւ այդ կարծիքին են նաեւ դրսում սփյուռքահայերը:

-Ձեր ասածից բխում է, որ խնդիրը իրավական չէ, այլ միայն քաղաքական, ըստ այդմ՝ որո՞նք են լինելու Ձեր հետագա քայլերը:

-Ես հասկանում եմ դա. երբ դու ինչ-որ մեկին ասում ես՝ դու տգեղ ես, ինքն արդեն քեզ չպետք է սիրի: Եվ երբ Ժիրայրն ասում էր այդ մասին՝ հաշվի առնելով իրականությունը, ոչ թե հանցագործություն էր անում, այլ ներկայացնում էր իր ազգային մտահոգությունները: Այսօր շատերն ունեն այդպիսի մտահոգություններ, բայց նրանք ինչ-որ մարդկանց են ծառայում, բայց Ժիրայրն ասում է, որ դուք տգեղ եք առանց կապ ունենալու այդ մարդկանց հետ: Եվ այս պատերազմը Ժիրայրի դեմ արվում է, որպեսզի նրան մեկուսացնեն: Միակ նպատակը այս է:

-Կարո՞ղ եք որոշակի հասցեատիրոջ ուղղել Ձեր ասելիքը:

-Այսի՞նքն:

-Այս մեղադրանքները մամուլում հասցեագրված են Ռոբերտ Քոչարյանին եւ Սերժ Սարգսյանին:

-Ես դա չգիտեմ. անընդհատ իրար վրա են գցում, բայց դա պետք է հետաքրքրի առաջին հերթին լրագրողներին, ովքեր իրենց գործունեության հիմքում ունեն ազգային մտահոգություններ, այլ ոչ թե առաջնորդվում են զուտ մասնագիտական պրոֆեսիոնալիզմով:

-Այս իրավիճակում ինչպե՞ս եք շարունակելու պայքարել:

-Խնդիրն այսօր Ժիրայրին դուրս բերելը չէ: Ժիրայրը պետք է գա, այսօր չգա՝ վաղը պետք է գա, բայց կգա: Մենք սրան հավատում ենք: Բայց այսօր մենք աշխատանքներ ենք տանում սփյուռքում, այստեղ էլ կան համախոհ ընկերներ, ովքեր շարունակելու են եւ գործը հասցնելու են ավարտին. Ժիրայրի եւ Վարդանի ձերբակալությունը չի նշանակում, որ մենք սառչելու ենք եւ կամ վախեցանք: Սկսած գործը ավարտին ենք հասցնելու:

-Ո՞ր գործը:

-Որ ինչպես ուզենք, այնպես էլ ապրենք: Այսինքն՝ ժողովուրդը պետք է կարողանա իր պատկերացրած լավ ձեռով ապրել:

-Այսինքն՝ Դուք ակնարկում եք իշխանափոխության մասին:

-Բնական է, երբ մենք տեսնում ենք, որ իրենք սխալ ընթացքի մեջ են, ինչո՞ւ չասենք: Ի՞նչ է՝ ասելը վա՞րտ բան է:

- Սփյուռքահայերը ե՞ւս այս կարծիքին են:

-Անշուշտ. դուք չեք պատկերացնի, թե ինչ վիճակում են այսօր նրանք գտնվում: Տարիներ շարունակ դրսում ապրում էինք Ժիրայրով, նրա գաղափարներով եւ այլն, եւ այլն: Ու, կարծես, հիմա փականք դրվեց այդ ամենին: Եթե այսպիսի անձնավորությունը պետք է վճարի ինչ-որ բաների համար, ուրեմն՝ ո՞վ կա, որին սփյուռքում պետք է շարունակեն հետեւել եւ հավատալ: Այս ամենը շփոթության մեջ է գցել սփյուռքահայերին, եւ նրանք շատ վիրավորված են: Սփյուռքը հիմնականում ներկայացնում են 2-3 կուսակցություններ, բայց այնտեղ շատ մեծ թվով անհատներ կան, ովքեր չեն պատկանում որեւէ կուսակցության. նրանք թիվը շատ մեծ է: Եվ նրանք շատ վրդովված են այս ամենից: Այսօր իշխանությունները պետք է հասկանան, որ սփյուռքում նոր որակի մտահոգություն կա:

-Բայց ի՞նչ կարող է անել այս պարագայում սփյուռքահայությունը:

-Շատ բան: Նրանք սկսելու են բողոքի ակցիաներով, նամակներով եւ մի շարք այլ բաներով իրենց դիրքորոշումն ու կեցվածքը ներկայացնել: Սփյուռքահայերը կարող են շատ բաներ անել. մինչ այսօր նրանք իրենց ֆինանսական օգնությունն են բերել ի նպաստ Յայաստանի, այսօր թող բոլոր կուսակցությունները իմանան, որ սփյուռքում իրարանցում է սկսվելու. մենք սրտաբուխ ուղարկել եւ արել ենք այն, ինչ կարողացել ենք, հիմա մի վեր կեցվածքով ենք փորձելու արտահայտել ազգային մտահոգությունները:

-Սփյուռքը Ձեզ հետ է. իսկ Յայաստանում կա՞ն այնպիսի ուժեր, որոնց վրա կարող եք հենվել, եթե այո՝ ապա կնշե՞ք:

-Կան, անշուշտ, կան, բայց դա ապագան ցույց կտա: Այսօր մեզ պետք չէ հիշատակել առանձին անուններ, քանի որ ովքեր համախոհ են մեզ հետ եւ չեն ողջունում այս ամենը, կարող են իրենց գործողություններով դա փաստել, իսկ ասելու կարիք մենք չունենք:

ԳՈՂԱՐ ՎԵՁԻՐՅԱՆ

Յ.Գ. -Այսօր Թորոս Սեֆիլյանի մասնակցությամբ տեղի է ունենալու մամուլի ասուլիս: Երեկ տեղեկացանք նաեւ, որ Ժիրայր Սեֆիլյանի համախոհներին հաջողվել է ձեռք բերել այն հավաքի տեսագրությունը, որը դրված է մեղադրանքի հիմքում: Հնարավոր է, որ լրագրողներն այսօր ասուլիսի շրջանակներում հնարավորություն ունենան այն դիտելու: